


ՀԱՅ-ԵԿԵՂ ԵՑԻ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ



ԱՊՐԵԼ — 1901

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ — ԹԻ ԺԴ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

	էջ
1 . Խմբագրական .—Մի մեծ Ձեռնում	97
2 . Քարոզ Չասկի .	103
3 . Քարոզ ի Գալուս Մոզուցն .	106
4 . Թղթակցութիւն . —	
Նամակ Պարսկաստանէն	115
Նամակ Ս.Երուսաղէմէն	118
Նամակ Թօփասէն	119
5 . Անջնջեղիութիւն Քահանայութեան	121
6 . Քերթնած .—Երկու Ոսոխներ .	123

Հանդիսիս բաժանորդագինն է ամեն
սեղի համար տարեկան 4 Շիլինգ կամ 5 Ֆրանկ,
վեցամսեայ 2 Շիլինգ կամ 2½ Ֆրանկ քղթասարա :

Տանկաստանի քաղաքաց մէջ ձեռքէ կը ծախուի
հասը՝ Երկու (2) Դահեկանի :

Խմբագրութեան կամ բաժանորդագրութեան
վերաբերեալ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել
առ Խմբագրութիւն Հանդիսիս, հետեւեալ հասցէի .

ARMENIAN RECTORY,

Upper Brook Street,

MANCHESTER.

ՀԱՅ-ԵԿԵՂԵՑԻ

ԱՐՄԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԹԻԻ 14

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1901

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԻ ՄԵՄ ՁԵՂՄՈՒՄ

1. Հայ . Եկեղեցւոյ մէջ տիրող ամենէն մեծ զեղծումն եւ բարեկարգութեան կարօտ ամենակարեւոր կէտն է՝ առանց հաղորդուելու Ս. Պատարագին ներկայ զգնուիլն : Չենք ուրանար որ բացառաբար առանց հաղորդուելու՝ Ս. Պատարագի մասնակցութիւնն օգտակար կարէ լինել , եւ մեր նպատակը չէ՝ նշաւակել այն բարեպաշտ քրիստոնեայնեան որք ամեն կիրակի Ս. Պատարագի ներկայ գտնուելով՝ տարւոյ մէջ եւս մի քանի անգամ արժանաւոր պատուատութեամբ կրմատչին ի Ս. Սեղան Տեառն , եւ մեր Փրկչի պատուական Մարմին եւ Արիւն կըճաշակեն : Այլ մեր խօսքն ուղղել կուզենք այն անձանց դէմ որք զինքեանս Հայ . Եկեղեցւոյ զաւակունք կըհամարին , մեծ ցաւ ու վիշտ պիտի զգային , եւ նախատինք պիտի համարէին , եթէ մէկը քրիստոնեայ կամ լուսաւորչական անունը զանար նոցա . բայց եւ այնպէս այս բարի մարդիկ՝ թէպէտ եւ յաճախ եկեղեցի կերթան եւ իւրեանց դրացեաց եւ ժողովրդոց մէջ հաւատացեալ քրիստոնէի համբաւն ունին՝ տարիներով Ս. Հաղորդութիւն չեն առներ , քրիստոնէութեան եւ լուսաւորչականութեան այս ամենէն կարեւոր եւ առաջնակարգ պայմանը չեն կատարեր :

2. Ս. Հաղորդութիւնն է որ իւրաքանչիւր անհաս քրիստոնեայ հաղորդակից կ'առնէ Քրիստոսի Ս. Մարմնոյ եւ Արեան , եւ հետեւապէս նորա Ս. Եկեղեցւոյն : Չհաղորդուողն ինքզինքը կըկարէ՝ արդեամբ կըմերժէ Ս. Եկեղեցւոյ անդամակ-

ցութենէ, թէպէտ եւ քաղաքավարութիւնն եւ Եկեղեցւոյ ունեցած ոէրն հանգէպ իւր զաւակաց՝ չին թողուր որ այդպիսի խորթացեալ զաւակունք իսպառ մերժուին: Սակայն Ս. Պատարագի աղօթքներ եւ ամբողջ արարողութիւն ամենապարզ կերպիւ կ'ապացուցանեն որ Ս. Պատարագի ամենէն էական մասն հաղորդուելն է: Ս. Պատարագին ներկայ գտնուիլ առանց հաղորդուելու՝ կարի չափաւոր եւ թերակատար մասնակցութիւն համարելու է այդ ահաւոր խորհրդոյն: Միայն խիստ շատ ընդհանրացած եւ մեր ժողովրդեան ամեն դասակարգի մէջ տարրացած ներկայ յոռի սովորութիւնը զմեզ յետս կըկասեցնէ պահանջելէ՝ որ մեր Եկեղեցւոյ պայմանը լիովին կատարուի, եւ Ս. Պատարագին ներկայ գտնուողք ամենեքին հաղորդուին, եւ առանց հաղորդուելու իրաւունք չունենան ներկայ գտնուելու: Առաքելոց եւ նախկին Եկեղեցւոյ պատմութիւն որեւէ տարակոյս չեն թողուր մեր մասաց մէջ՝ որ առանց հաղորդութեան Ս. Պատարագին ներկայ գտնուիլն անծանօթ էր այն հին դարուց մէջ, եւ այս ճշմարտութեան վկայ է մեր Եկեղեցին որ Ս. Խորհրդոյն էական մասն սկսելէն յառաջ հրամայէ՝ «Եւ որք ոչ էք կարող հաղորդիլ աստուածային խորհրդոյս՝ առ դրունս ելէք եւ աղօթեցէք:» Նոյնպէս սարկաւագի ազգարարութիւնն՝ «Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք եւ սրբութեամբ հաղորդեցարուք:» Կամ երբ զպիւրներն կ'եզջեն «Լցաք ի բարութեանց քոց՝ ճաշակելով զՄարմինն եւ զՍրիւնն եւ այլն:» Կամ «Գոհանամք զքէն Տէր որ կերակրեցեր զմեզ անմահական սեղանոյ քոյ եւ այլն:» Այս խօսքերէն որպէս եւ ամբողջ արարողութենէն յայտնի է թէ հաղորդուելու պատրաստ չեղողներ պէտք է հեռանան վերաբերումէն յառաջ, եւ մնացեալք ամենեքին մեծ եւ փոքր բնականաբար պէտք է որ հաղորդուին, յետ որոյ գոհաբանական երգերը (Լցա՛մ եւ Գոհանամք) կերգեն:

Թէպէտ եւ կատարեալ իրաւունք պիտի ունենայինք ասել թէ անհաղորդ մասնակցութիւն բոլորովին սխալ է եւ հակառակ Հայ. Եկեղեցւոյ ոգոյն, սակայն տեսնելով այս չարեաց տարածութիւն մեր ժողովրդոց մէջ, կըշատանամք մեր խօսքն ուղղելով միայն առ նոսա որք ոչ յս զեղծում ծայրայեղութեան հասուցած են, որք տարիներով չեն հաղորդուէր, կամ բնաւ չեն հաղորդուիր եթէ չստիպուին (ինչպէս ամուսնութեան առթիւ. քայց եկեղեցի կըզանս եւ թերեւս քարեպաշտութեամբ կ'աղօթեն):

ՅԿ Այս զեղծման զլիաւոր պատճառներն են՝ (1) Չար Օրինակ, (2) Խոսովանքի դժուարութիւն, (3) Անտարբերութիւն եւ Ամպարիտես կենցաղավարութիւն: — Եթէ ճշմարիտ է թէ եկեղեցւոյ մէջ ներկայ գտնուող ամեն քրիստոնեայէ կրօնապատուի՝ հաղորդուիլ, ուրեմն ամենէն յառաջ հոգեւորականներէն կրօնապատուի որ բարի օրինակ ցոյց տան աշխարհական ժողովրդեան՝ առանց բանաւոր պատճառի Ս. Հաղորդութենէ յետ չմնան: Բայց դժբաղդաբար ներկայ սովորութեան համեմատ կարծես թէ օրէնքով արգելուած լինի հոգեւորականաց հաղորդուիլն: Հոգեւորականն միայն այն ժամանակ կրնաղորդուի երբ ինքն Ս. Պատարագ կրճատուցանէ: Ուստի կարելի է տեսնել հոգեւորականներ որ ամիսներով չեն հաղորդուիր, թէպէտ եւ ամեն կիրակի Ս. Պատարագի ներկայ կրդանուին: Բացայայտ է որ առաջին մեղանշողներն հոգեւորականներս եւք. Ուստի ժողովուրդն եւս տեսնելով որ այս ինչ քահանայ կամ եպիսկոպոս առանց հաղորդուելու կրկենայ՝ կրկարծէ թէ հաղորդուիլն անհրաժեշտ չէ:

Հարկաւ յիմարութիւն պիտի լինէր՝ սպասել կամ պահանջել որ դարուոր ժամանակներէ ի վեր տիրող այս զեղծում անմիջապէս բարեփոխուի: Բայց եւ այնպէս ցանկալի է որ նոյն իսկ այն բարձրաստիճան հոգեւորականք որ այլ եւ այլ պատճառներով շատ քիչ անգամ առիթ ունին Ս. Պատարագ մատուցանելու՝ ինքեանք խորհէին եւ զգային հաղորդուելու պէտք, եւ գէթ ամիսն մէկ անգամ Ս. Հաղորդութիւն առնէին պատարագող քահանայի ձեռքէն, որով ժողովուրդն եւս հետզհետ պիտի կարենար զգալ որ մեր Փրկչի Ս. Մարմնոյ եւ Արեան յաճախ ճաշակուին անհրաժեշտ է հոգւոյ առողջութեան եւ կենդանութեան համար:

Ոչինչ նուազ լիաասարեք է դպրաց եւ եկեղեցւոյ մէջ պատճառն վարող այլ եւ այլ անձանց՝ հոգաբարձուաց եւ եկեղեցպանաց գէշ օրինակ: Երբ «Երկիւղիւ եւ հաւատով յառաջ մատիք» ազգաբարոզ սարկաւազն տարիներով չի հաղորդուիր, երբ «Աստուած մեր եւ Տէր մեր երեւեցամուզ» երգեցող զպիրն ինքնին անհաղորդ կրմնայ՝ բնականաբար այդ բառերի զօրութիւն եւ իմաստ մեծապէս կրտկարանայ, եւ մի սոսկ բանաձեւութիւն կրդառնայ: Ուստի զարմանալի չէ որ այս աստիճան ձեւակերպութիւն դարձած Ս. Եկեղեցւոյ անեղ խորհուրդն՝ նոյն իսկ շատ բարեպաշտ աշխարհականաց համար իւր նշանակութիւնը եւ ան-

հրաժեշտութիւնը կորուսած է: Երբ ծնողք ինքեանք չեն հաղորդուիր, բնականաբար իւրեանց զաւակաց եւս չեն ստիպեր որ հաղորդուին: Ի՛նչքան գեղեցիկ եւ քաջալիրիչ եւ միանգամայն օգտակար պիտի լինէր, եթէ գոնէ տարին չորս հինգ անգամ ամեն հայր իւր համայն ընտանիք եւ զաւակունք առած՝ Աստուծոյ Սուրբ Սեղանին մօտենար եւ Ս. Եկեղեցւոյ մասնաւոր շնորհքն խնդրէր ասելով՝ «Ահա-լասիկ ես եւ մանկունք իմ զոր ետ ինձ Աստուած»: Կամ ամեն ուսուցիչ իւր աշակերտներն հաւաքէր եւ ինքն եւս գլուխ անցնելով՝ իւր հոգեւոր եւ բարոյական խնամոց յանձնեալ մանուկներով յաճախ մերձենար Ս. Սեղանին եւ ինքնին զգալով՝ իւր աշակերտաց եւս զգացնել տար թէ «զի՛ք քաղցր է Տէր:»

4. Ս. Հաղորդութեան յետ մնալու սովորական պահանաւաբանութիւններէն մին այն է՝ թէ քահանայի մօտ իւրեանց մեղքերն խոստովանուելէ կրճատուին: — Ամեն հայ քահանայ որ ժողովրդեան խոստովանալը կըլսէ կամ կըխոստովանցնէ՝ քաջ գիտէ թէ ինչքան անտեղի եւ մոտոի է այս առարկութիւն: Խոստովանուողներէն 100ին 90ը մեր ժամագրոց սկիզբը դրուած Մեղայն կրկարդան, եւ երբ քահանայն հարցնէ եթէ մասնաւոր մեղքեր եւս ունին խոստովանելու՝ գրեթէ միօրինակ պատասխանն է ընդհանրապէս. «Իշխէ ասոնց մէջէն քիչ շատ գործած եմ»: Կամ «ուրիշ ըսելիք չունիմ»: Այս պարագային քահանայն ուրիշ ճար չունի բայց եթէ յորդորել որ զարձեալ առանձնապէս իւր սիրտը քննէ եւ իւր գործած բոլոր մեղքերն ու թերութիւններ իւր մտաց առջեւ բերէ, եւ զղջայ եւ յԱստուծոյ ներումն եւ թողութիւն խնդրէ:

Քա՛ւ լիցի որ Խոստովանութեան յարգը եւ պիտանութիւնը անգիտանք. քա՛ւ լիցի որ ներկայ թոյլ եւ անկատար եւ երբեմն կեղծ ու անգիտակ խոստովանութեան ջատագով հանդիսանալ ուզենք: Մենք կըփափագէինք գրաբառ Մեղայն գործածութիւնը արգիլեալ տեսնել գրաբառ չգիտցողներին համար, եւ փոխարէնը խոստովանուողի ազատ կամքին եւ մտքին թողուլ որ իւր գործած մեղքերն իւր հասկացած լեզուաւ՝ իրական զղջմամբ եւ ապաշխարութեամբ խոստովանի, որպէս զի քահանայէն եւս պէտք եղած հոգեւոր խրատ եւ մխիթարութիւն ստանայ: Սակայն այսպիսի արմատական բարեփոխութիւն մեր Եկեղեցւոյ վեհագոյն պաշտօնէից թողլով՝ մենք քահանայքս պիտի

չատանամք եղած նիւթէն ըստ կարի օգտակար արդիւնք յառաջ բերելու ջանքեր առնեմք: Երբ կրտսնանեմք որ թէ խոստովանութեան եւ թէ Ս. Հաղորդութեան մասին մեր ժողովրդեան մէջ ընդհանուր թուլութիւն եւ թմրութիւն կը բիրէ, մեր պարտքն է որքան կարող ենք դիւրութիւն ընծայենք ամենէն յառաջ Ս. Հաղորդութեան վարժելու եւ միայն անուղղակի եւ ընդհանուր յորդորներով խոստովանուելու քաջալերենք: Պէտք է հաւատանք որ Քրիստոսի Ս. Մարմին եւ Արիւն կենսադործելու՝ սթափելու եւ արթնցնելու զօրութիւն ունին: Առաջին Ս. Հաղորդութիւնը կարէ երկրորդին նախապատրաստութիւնն համարուի, եւ փորձառու եւ ուշադիր խոստովանահարք կարեն վկայել թէ ինչքան անգամ Ս. Հաղորդութիւն պատճառ եղած է երկրորդ խոստովանութիւնը աւելի մանրակրկիտ եւ աւելի սրտագին զղջմամբ եւ ապաշխարութեամբ կատարելու: Ուստի քահանայի պարտքն է ներկայ պարագայից ներքոյ ամեն դիւրութիւն եւ հրապոյր ընծայել ժողովրդեան՝ յաճախ հաղորդուելու, խոստովանքը ոչ թէ միայն չգոհարացնել այլ մինչեւ իսկ Մեղայի այն տունը որ նոյն իսկ ամենահմուտ գրաբարագէտին անհասկանալի են՝ բոլորովին ի բաց թողուլ: Այս մասին բարեկարգութիւնը ոչ թէ խոստովանքէն պիտի սկսի, այլ Ս. Հաղորդութենէն:

5. Ս. Հաղորդութենէ յէն մնալու մի ուրիշ պատճառ եւս կայ որ իրական արգելք մի է անաւոր սուրբ խորհրդոյն մասնակցութեան: — Այսինքն, ոմանք յիմարութեամբ կամ ինչ ինչ պարագայից բերմամբ ամբարիշտ կիանք կը վարեն, կամ մի ծանր մեղք գործած են զոր չեն ուզեր խոստովանիլ, եւ առանց խոստովանելու չեն համարձակիր Ս. Հաղորդութեան մերձենալ՝ յիշելով Սրբազան Առաքելոյն խօսքեր թէ. «Այսուհետեւ որ ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ եւ արեանն Տեառն... զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրուս՝ ուտէ եւ ըմպէ, զի ոչ խտրէ զմարմինն Տեառն:» Այս պարագային թուլութիւն կամ անտարբերութիւն մահաբեր է. ոչինչ մեղք այնքան ծանր է որքան խղճի դէմ գործուած մեղքն, որ մեղք ընդդէմ Հոգւոյն Սրբոյ կը կոչուի եւ աններելի կը հռչակուի ի Ս. Քրիստոս: Այս կարգի մարդիկ թերեւս իւրեանց առօրեայ գործառնութեանց կ'զբաղ-

մանց մէջ՝ այնպիսի մեջոցներ գործ կ'ածեն իւրեանց նպատակին հասնելու համար, որ խարդախութիւն լինելէ զատ՝ անխոհեմութիւն եւս է: Թերեւս իւրեանց անճնասիրութեան եւ հեշտախտութեան կիրքեր չեն թողուր որ առաքինի կեանք վարեն, կամ կամաց ոյժն ու հաստատամտութիւնը չունին՝ ինքզինքնին վեր հանելու՝ բարձրանալու մեղաց տիղմէն: Խոստովանքի թուութիւնը այսպէսների համար նշանակութիւն չունի. նոցա ամենախիստ եւ ամէնէն անաչառ զատաւորն ու զատապարտողն՝ իւրեանց խիղճն է. եւ հարուածեալ խղճի առաջին սպեղանին է մեղաց ճանապարհէն հրաժարիլն: Հոգ չէ թէ ինչքան ծանր եղած են մեղքերդ անցելումն. այժմ պէտք է զազարիս մեղք գործելէ, եթէ կ'ուզես Փրկչի Ս. Մարմնոյ եւ Արեան շնորհքն վայելել: Ամենակատարեալ ապաշխարանքն այն է որ անցած մեղքը չկրկնենք: «Երթ եւ այլ եւս մի մեղանչեր:» Այս է մեղաց քաւութեան եւ թողութեան առաջին պայման: Օգուտ չունի քահանայի մխիթարական խօսքեր եւ Ողորմեսցի ասելն, եթէ մյտքդ դրած ես եկեղեցիէն մեկնելուդ՝ խոստովանածդ մեղքերը նորէն գործել եւ կրկնել:

Կրօնաթերթիս խմբագրութիւն մեծապէս շնորհակալ պիտի լինի եթէ հոգեւոր հովուութեան փորձառու Գերապատիւ եւ Արժանապատիւ Ս. Հարք բարեհաճին իւրեանց ղիտողութիւններ եւ առաջարկութիւններ այս մասին մեզ հաղորդել ի հրատարակութիւն: Այս զեղծումն մեր Եկեղեցոյ ոյժն ու կենսունակ զօրութիւնը հետզհետէ կըսպառէ ու կըցամքեցնէ: Ուստի ամեն հոգեւորականի պարտականութիւնն է իբրեւ աւանդապահ սրբազան խորհրդոց, իւրովսանն ջանալ եւ աշխատիլ, բանիւ եւ գործով, որ քրիստոնէական կրօնի այս ամենասուրբ խորհուրդն իւր լրութեամբն կատարուի, այն ոգւով եւ ըստ կարի այն կերպով ինչպէս սրբազան Առաքեալք եւ նախկին Եկեղեցւոյ հաւատացեալք կըկատարէին:

ՔԱՐԱՉ ՉԱՏԿԻ

Զի՞ խնդրէ՞ զկենդանին ընդ մեռեալս . չէ սոս , քանզի յարեալ :

Ի՞նչ աւետարեր ողջոյն է այս որ Քրիստոսի Ս. Գերեզմանի պահապան հրեշտակներ կուտան իւզարեր կանայն , որ եկած էին առաջին Չատկի առաւօտուն իւրեանց յարդանքները մատուցանելու իւրեանց երկնային վարդապետի մարմնոյն , եւ ինչ որ Ուրբաթ գիշեր ի տարածմու պակաս թողած էին՝ այժմ՝ լցուցանելու : Կարող ենք երեւակայել այն հաճելի այն զմայլելի զարմացումն որով հրեշտակաց աւետիսն ընդունեցին : Ս. Աւետարանէն կ'երեւի որ Քրիստոսի աշակերտք բոլորովին յուսանատած էին , եւ այն մեծամեծ յոյսերը զորս նոքա կրտածէին Մեսիական արքայութեան հաստատման համար այլ եւս ի գերեւ ելած կըհամարէին : Քրիստոսի խոստումն թէ յետ երկից առուրց պիտի նորէն յարութիւն առնէ՝ խոր արեւո՞ ձգած չէր անոնց սրտերու մէջ . եւ չէին հասկանալ : Եւ ըմբռնել թէ ինչպէս կարելի էր յարութիւն առնել : Բայց եւ այնպէս որդիական սիրով սիրած էին զնա , եւ տակաւին որք մնացած զաւակաց սիրով եւ գորովով կըյիշէին իւրեանց վարդապետն : Սակայն այս երկնային ողջոյնն բոլորովին հիացոյց սքանչալոյց զնոսա , անհուն ուրախութեամբ լցոյց , եւ այդ ուրախութեան արձագանքն է որ ի բազում պարուց հետէ մեր եկեղեցւոյ մէջ կըլսուի . «Այսօր յարեալ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր . քեզ աւետիք խնդութեան , հարսն ի յերկրէ եկեղեցի , օրհնեալ ի ձայն ցնծութեան զԱստուած քո Սիո լիս :»

Արդարեւ ողբալի էր բայց եւ միանգամայն հրաշալի մեր Փրկչի տնօրէնութեանց վերջին տարիների ընթացք . մերձ երկք տարի քարոզեց Հրէից մէջ իւր աստուածային սիրոյ եւ իմաստութեան ցովմունքը սփռելով ամենուրեք եւ ամենի վերայ : Սակայն Հրեայք ի կուրութենէ սրտից իւրեանց մերթեցին այդ սէր եւ լոյս , եւ սիրեցին զխաւար առաւել քան զլոյս . բամբասեցին եւ զրպար սեղին զնա , անգապար հալածեցին , եւ ի վերջոյ իւրեանց դատական ատեաններէ առաջ եւ զնա դատապարտեցին ի չարչարանս եւ ի մահ . այն պղտիկ յաջողութիւն եւ ընդունելութիւն եւս զոր նա գտած էր՝ կըկարծուէր թէ այլ եւս պիտի ոչնչանայ :

մարդկորէն խօսելով ամեն ինչ անյուսալի էր՝ մթին եւ խաւար որպէս այն միջօրէն յորում նա խաչեցաւ : Կըկարծուէր թէ Քրիստոսի աւետարան ջնջուեցաւ աշխարհի վերայէն երբ նորա պատուական մարմին գերեզմանի մէջ դրուեցաւ : Ասկայն մինչեւ ցայս վայր ողբալի եւ մթին հորիզոնի վերայ ծագեցաւ նորա ի մեռելոց յարութեան փառաւոր լոյսն , որ լուսաւորեց զամենայն տիեզերս , քանզի Տէրն մեր «մահուամբ զմահ կոխեաց» , «խորտակեաց զգրունս դժոխոց եւ ելոյժ զբռնութիւն մահու , եւ ետ յոյս հաստատութեան վերստին նորոգման ամենայն մարդկան» : Հրեայք յաղթութեամբ կը պարծէին , այլ արգիւնք իրաց ցոյց տուին որ յաղթութիւնը մեր Փրկչինն էր :

Երբ մենք այսօր կը տօնենք այդ յաղթութեան տարեդարձ , եւ երբ կը տեսնենք աշխարհիս ողբալի դրութիւն , մարդկան խստասրտութիւն , անիրաւութեան առերեւոյթս յաղթութիւն , եւ արգարութեան պարտումն , մեր այս վշտագնեալ սրտերին միակ միսիթարութիւն պատճառող կէտն՝ Քրիստոսի սուրբ յարութեան Զատկի լոյսն է , որ իւր բարի գալստեամբն զմեզ կը քաջալերէ՝ թէ Աստուած ընդ մեզ է , եւ թէ արտաքին երեւոյթներով խաբուելու չենք , եւ առժամանակեայ կամ առերեւութին պարտումն՝ կորուստ չի նշանակեր , այլ ընդ հակառակն՝ յաղթութեան նշան կրնայ լինել :

Տացէ Տէր որ Քրիստոսի սուրբ յարութեան լուսոյ այս նշոյլն սփռէ աշխարհիս վերայ կատարեալ խաղաղութիւն . այն խաղաղութիւն զոր Տէրն մեր զկնի յարութեան կ'աւանդէր իւր աշակերտաց ասելով՝ «Խաղաղութիւն ընդ ձեզ . » մի խաղաղութիւն որ արգարութեան պաշտպան կը նանդիսանայ եւ անիրաւութիւնը կը ջնջէ աշխարհիս վերայէն . մի խաղաղութիւն զոր Քրիստոսի ծննդեան միջոցին երկնային հրեշտակք կ'աւետէին հովուաց ասելով . «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն , ի մարդիկ հաճութիւն : »

Տամեւ ինն դարուց ի վեր Քրիստոսի այս խաղաղութեան ողջոյն ամ ամի կ'աւետուի Եկեղեցոյ եւ աշխարհի : Ինչպէս այն ժամանակ մեր Փրկիչն իւր թշնամեաց նենգութեան հանդէպ անյողդող մտօք իւր խաղաղութիւնը կը պարգեւէր իւր աշակերտաց , նոյնպէս եւս այդ խաղաղութեան աւետիան մեզ կը շնորհուի այսօր , որք թէ պէտեւ տարբեր դարու մէջ կ'ապրինք , սակայն ողջոյնը միեւնոյն ազդեցու-

թիւն ունի: Ինչպէս զկնի պատերազմի եւ յաղթութեան կուգայ խաղաղութիւն, նոյնպէս այն մեծ պատերազմը զոր Քրիստոս մղեց ընդդէմ չարին յաղթութեան յանգաւ: Ուստի եւ ինքն յարութիւն առնելէն անմիջապէս յետոյ այդպիսի զօրութեամբ յառաջ բերած խաղաղութիւնը կը ընչակէ իւրաջնոց եւ աշխարհի: Աշխարհս միշտ խռովեալ է, եւ երբէք կարող չէ կատարեալ խաղաղութիւն ունենալ, ոչ եւս այդպիսի վաղանցիկ խաղաղութիւն է Քրիստոսի պարգեւածն: Նորա պարգեւածն կայ եւ մնայ անսասան եւ անդրգուցիկ, թէպէտեւ բազում անգամ ամբողջ աշխարհս տակնուվրայ լինի, ազգեր իրարու դէմ ելնեն, բանիւ եւ գործով զիրար թշնամանեն եւ միմեանց յլսասեն. սրաի եւ մտաց եւ հոգւոյ խաղաղութիւն է նորա պարգեւն, եւ, քրիստոնեայ եղբայր, եթէ այդ մտաց անդորրութիւն եւ հոգւոյ խաղաղութիւն չունիս, ուրեմն դեռ ստացած չես Քրիստոսի յարութեան ողջոյն: Ուրեմն քանի որ տակաւին ժամանակ ունիս՝ շտապիր ձեռք բերել զայն. օրհասդ յանկարծակի կուգայ եւ մինչդեռ զուքո բոլոր ոյժերդ կը խառնուին այս աշխարհի խարուսիկ եւ վաղանցիկ խաղաղութիւն ձեռք բերելու, յանկարծ զքեզ կը գտնես յաւիտեականութեան մէջ առանց պաշարի եւ առանց խաղաղութեան:

Ամենակարողն Աստուած օրհնէ զձեզ ամենեսին եւ ձեր ամենեցուն սրտերի մէջը տպաւորէ այն կատարեալ խաղաղութիւն զոր իւր յարութեամբ ձեռք բերեց մեզ համար: Երանելի էք եւ օրհնեալ լինիք զուքո մանաւանդ որ այս օր կամ այս վերջին աւուրց մէջ Քրիստոսի խաղաղութեան ողջոյնը աւելի զգայի եւ շօշափելի կերպիւ ընդունեցիք կամ հանգեցնեալ էք այժմ ընդունիլ ի ձեռն հաղորդութեան ամենասուրբ Մարմնոյ եւ Արեան Տեառն մարոյ: Ամուր պահեցէք այդ չնորհքն եւ իբրեւ մի պատուական դանձ՝ մեղաց ազտեղութենէ կամ արատէ զերծ պահեցէք զնա: Մաղթենք որ բարերարն Աստուած իւր յաղթական սուրբ յարութեան յոյսը սփռէ նաեւ մեր թշուառացեալ հայրենեաց ու հայ ժողովրդեան վերայ, եւ հոգեւոր մխիթարութեան հետ մէկ տեղ՝ նաեւ մարմնաւոր հանգիստ եւ զարաւոր տառապանքէ դադար պարգեւէ մեզ: Իւր սուրբ յարութեան լոյսը սփռէ սերելի ժողովրդեանդ տանց եւ ընտանեաց շուրջ, լցուցանէ զձեզ զամենեսին եւ հոգեւոր եւ մարմնաւոր բարեօք ի լրութիւն Եկեղեցւոյ եւ ի փառս Ամենակալին, որում վայելէ փառք եւ պատիւ այժմ եւ յաւիտեանս. Ամէն:

ՔԱՐՈՋ Ի ՔԱՆՈՒՍՏ ՄՈՓՈՒՅ

Ի ԳԵՐ. ՏԵՐ ՄԱՄԲԻԷ ԵՊԻՍԿՈՊՈՍԷ ՄԱՐԿՈՍԵԱՆ

Թագաւորք Արաբայ եւ Սաբայ պատարագս բերցին նմա :
Սաղ . ՀԱ . 10, 11 :

Մինչեւ հիմա մեր Փրկչին Մտունդն յայտնող աստուածային ապացոյցները տեսանք, — աշխարհագրին մասնաւորութիւնը, հրեշտակաց աւետելը՝ դաշտի հովիւներուն . Աստուծոյ հրամանաւ անունը Յիսուս զրուելը . տաճարն ընծայուելով ծերունի Սիմէօնին հրաշապէս տաճար գալը, անոր մարգարէութիւնները եւ այլն : Ասոնք բոլորը արդարեւ սքանչելիք են՝ ամենակարող Աստուծոյ տնօրինուած . եւ այս աստուածային մանկան աստուածութիւնը յայտնող, ծանուցանող եւ հռչակող վկայութիւններ են . որք թէ եւ բաւական են խորհող եւ դատող մարդուն հաւատքը հաստատելու, բայց Աստուծոյ ամենագիտութիւնը հաճած է՝ մանկան այս նոր ծնած վիճակին մէջ՝ անոր աստուածային ծագման ուրիշ վկայութիւններ ալ տալ, որ ամեն վիճակի եւ աստիճանի տէր մարդիկ, — իշխանն ու հպատակը, հարուստն ու աղքատը, գիտունն ու տգէտը — համոզելու բաւական լինին : Բայց կամակոր յամառին, ինքնահաւան կամապաշտին, ծոյլ, անհոգ եւ անտարբեր մոլորեալին համար ամեն բան անօգուտ է, քանզի օգտուիլ չեն կամեր . համոզուողները կրկանգնին, ժիտողները կը գլորին, ոմանք կ'արձակուին ի խաղաղութիւն, այլք կը կաշկանդուին ու կը կորսուին խռովութեան հակառակութեան եւ անյուսութեան մէջ : Ուստի Աստուած կը յաճախէ փաստերն ու վկայութիւնները, որպէս զի մէկը հաւատքին մէջ հաստատուի, եւ միւսը իւր անհաւատութեան պատճառ չունենալով՝ իւր կորստեան պատասխանատու ինքը լինի :

Սիմէօն Մերունոյն՝ տունէն տաճար գալը նորածին մանկան համար, արդարեւ հրաշալի էր եւ փառաւոր, բայց այսօր խիստ հեռաւոր երկիրներէ, հիթանոսաց աշխարհէն նշանաւոր մարդիկ եկած են, նշանաւոր՝ մեծութեամբ, ճոխութեամբ եւ իմաստութեամբ, սոքա ինչու՞ այս մեծածախ պատրաստութեամբ, այս երկար ու շատ զժուարին

ճանապարհորդութիւնը յանձն առած են : — Ասոնք ալ ուրիշ նպատակ չունին, բայց միայն եկած են ողջունելու Հրէից նոր ծնած թագաւորը, եկած են վկայելու այս հրաշածին մանկան աստուածութիւնը, մարդկութիւնը եւ թագաւորութիւնը :

Յիսուսի ծնած ատենները արեւելքէն — Պարսից, Բաբելացոց կամ Մարաց աշխարհէն, — (Թերեւս երեքէն միանգամայն) Երուսաղէմ կըգան գիտութեամբ, հարստութեամբ եւ իշխանութեամբ նշանաւոր երեք մարդիկ Մոգ անունով : Ասոնք նոյն ժամանակ ծանօթ բոլոր գիտութեամբ զարգացած եւ մասնաւորապէս աստղագիտութեամբ պարապող փիլիսոփայներ էին : Այս կարգի գիտնականք արեւելեան երկիրներու մէջ մեծ համբաւ ունէին, յարգ ու պատիւ կը վայելէին . եւ տէրութեան գլխաւոր պաշտօնէից կարգը կ'անցնէին : Դանիէլ մարգարէն այս կարգի գիտնականաց վրայ իշխան գրուեցաւ Բաբելոնի մէջ, ինքն ալ տէրութեան պաշտօնեայ լինելով : Ասկէ կրնանք հետեւցնել թէ Դանիէլի միջոցաւ Հրէից Մեսիայի ակնկալութիւնը ծանօթ կարող էր լինել Բաբելացոց . անոնցմէ Պարսից եւ Մարաց մէջ ալ կրնար տարածուած լինել : Նոյն իսկ Հրեայք ալ ցրուած լինելով՝ գերութեամբ այն կողմերը քիչ չատ յայտնած կըլինէին Փրկիչ թագաւորի մը գալուն ակնկալութիւնը : Ասոր հետ զնելով նաեւ Բահադամու գուշակութիւնը թէ — Յակովբէն աստղ մը պիտի ծագի եւ Իսրայէլէն մարդ մը, իշխանութեան գաւազան մը պիտի ելնէ եւ այլն (Թուոց ԻԴ 17) — կըկարծենք թէ բաւական ծանօթ պիտի լինէր անոնց՝ Փրկիչ Աստուծոյ մարգանալու ակնկալութիւնը : Աստուած իւր ամենահնար իմաստութեամբը այսպէս տնօրինած էր այն ատեն, որ այս խորհուրդը այն կողմերու իմաստնոց մէջ ծանուցուի :

Ամենաբարին Աստուած, որ զիսէ ամեն բան իւր բարի նպատակին ծառայեցնել, այս գիտնականաց պարապմունքը, աստղագիտութիւնը գործիք ըրաւ . եւ նորանշան աստղով մը իմացուց անոնց այն անակընկալ Փրկիչ Աստուծոյ մարգդեղութիւնը :

Այս նշանաւոր մարդիկ երբ աստղը տեսան, հասկացան որ այս բնական աստղ չէր, ոչ ալ օդին մէջ գոլորչիւնըէ գոյացող գիսաւոր մը, տեսան որ այս աստղը իր տեսակով, ձեւով եւ լուսով բոլորովին տարբեր էր . մանաւանդ չարժուամը չէր միւս աստեղաց շրջանին նման . ասոր շարժ-

ման մէջ իմացական ուղղութիւնն եւ իմաստ կրտսնուէր : Մոգերը քննելով , եւ անշուշտ Աստուծոյ յայտնութեամբ , իմացան աստղին ճշմարիտ նշանակութիւնը . այնու հետեւ անկասկած պատրաստուեցան եւ ամեն մէկը իրենց տեղէն ճամբայ կըննէր եւ աստղին առաջնորդութեամբ իրարու հանդիպելով՝ խմբովին ուրախութեամբ դիմեցին դէպ Հրէաստան , ու հասան Յրուսաղէմ , Հրէից թագաւորանիստ մայրաքաղաքը : Այս միջոցին երեւի աստղն աներեւու-թացու : Ասոնք իրենց ուրախութեամբը կըկարծէին որ բոլոր Յրուսաղէմացիք ալ ուրախ են իրենց նոր ծնած աստուածային թագաւորին համար , ուստի ամեն պատահած-նուն կըհարցնեն . — Հրէից նոր ծնած թագաւորին տեղը ու՞ր է . ինչու որ մենք արեւելք եղած տեղերն իս անոր աստղը տեսնա՞ք եւ եկանք երկրպագութիւն ընելու (Սաղ. ՀԱ. 10, 11 : Եսայ. 4. 6) :

Բայց ի՞նչ զարմանք որ Հրէայք իրենց թագաւորն ծնած ըլլալէն ընտու լուր չունին , եւ այս հեռիէն եկող օտարա-կան մարդիկներէն իմանալով զարմացած են : Սակայն այս մարդիկ Հրէայ չեն , Հրէից թագաւորութեան հպա-տակները չեն , անկէ շահ մը , կասկած մը , երկիւղ մը կամ ակնկալութիւն մը չունին , այնքա՛ն հեռաւոր երկիրներէ , ճանապարհի այնքա՛ն նեղութիւնն եւ դժուարութիւններ կրել , այնչա՛փ մեծամեծ ծախքեր եւ ժամանակի կորուստ յանձն առնուլ՝ ինչի՞ համար է . ինչու՞ կըզան ողջունել , երկրպագել եւ ընծայաբեր լինել օտար թագաւորի մը , այն ալ նորածին մանուկի մը : Այս մարդիկը ոչ ապուշ են եւ ոչ ցնորած , որ աննպատակ ասանկ ծանր զոհողութեանց յանձնառու լինին . անշուշտ խիստ հզօր , անդիմադրելի ազդեցութեան մը հնազանդելով յանձն առած են այս ամեն ծանր զոհաբերութիւնները :

Թէ որ միք այս հարցումներն ուղղակի անոնց ընէինք , հաւանական է թէ սա պատասխանը պիտի տային . — Ար-դարեւ մեք Հրէայ չենք . Հրէից իշխանութեան հպատակ-ներն ալ չենք . անոնց ազգէն վախնալու կամ յուսալու բան մը չունինք . բայց այս նորածին մանուկ թագաւորը միայն Հրէից չը պատկանիր , սորա տէրութիւնը բոլոր աշխարհի մարդկան վերայ է եւ իշխանութիւնը ազգէ յազգ յաւիտեան կրտսէ , ասոր կրնան հպատակիլ ամեն ազգեր , զինքը ընդունող եւ իրեն հնազանդողներուն վրայ կըթա-գաւորէ սիրով եւ գթութեամբ , զինքը մերժողներուն կը-

տիրէ իրաւամբ եւ արդարութեամբ : Մենք անոր աստուածային անձին մարդանալու նշանը երկնքէն տեսանք եւ ճանչցանք որ նա՝ Տէր , Փրկիչ եւ Թագաւոր է, նա է միայն արժանի ամենուն հպատակութիւնը եւ խոնարհ երկրպագութիւնն ընդունելու : Մենք մեր ստացած ծանօթութեան եւ ընդունած ազգեցութեան առանց ընդգիմանալու, առանց զանցառութեան, հկանք ուրախութեամբ իբր երեսփոխան հեթանոսաց, մեր եւ բոլոր ազգաց հնազանդութիւնը ներկայացնելու եւ հպատակութիւնը նուիրելու . որով եւ մեր սնոտի իմաստութեան յիմարութիւն լինելը խոստովանելու : Սա լոյս եղաւ մեզ, որ հեթանոսութեան թանձր խաւարին մէջէն ելնելով՝ ճշմարիտ աստուածապատկեան լոյսին հկանք : Մեք տեսանք լոյսը եւ եկանք որ Աստուծոյ վայելուչ երկրպագութիւնը անոր նուիրենք . Աստուծոյ իրաւունքը իրեն դարձնենք՝ զոր մինչ ցարդ զլացած էինք եւ անբանական յիմարութեամբ արարածոց կրճատուցանէինք եւ սնապարծութեամբ իմաստուններ կրկուցէինք . հիմա տեսանք լոյսը, հիմա ճանչցանք ճշմարիտ իմաստութիւնը : Այժմ երկնային ազգեցութեամբ կոչուելով, նորանշան յատուկ աստղի մը առաջնորդութեամբ եկանք մինչև հոս . ցոյց տուէ՛ք մեզ այս մարդոցեալ Աստուծոյ ծնած տեղը, որ մեր երկրպագութիւնը մատուցանենք : —

Հրեայք բան մը չեն գիտեր, պատասխան մը չունին տալու . այնքան թմրած, ապուշ ու անհոգ են, որ իրենց մօտ եղած բաներէն տեղեակ չեն . հեռաւոր երկիրներէ եկող օտարականներէ կըլսեն իրենց թագաւորին ծնունդը, եւ իրենք չը գիտեն անոր տեղը . բայց եւ գաղտնի կամ յայտնի հետաքրքիր ալ չեն լինիր, եռանդ եւ փոյթ ալ չեն ցոյց տար գտնելու, ճանչնալու եւ ողջունելու, այլ միայն նախանձոտ Հերովդէսին պէս իրենք ալ տակն ու վրայ կըլլան՝ անպատշաճ խորհուրդներով եւ անօգուտ տեղը (ինչպէս մեր դարու նիւթամոլներն ու անտարբերները, որ վերջապէս ձեռնունայն պիտի մնան) :

Ո՛վ քրիստոնեայ եղբարք, ո՛վ ժողովուրդ Աստուծոյ, չէ՞ որ նոյն բանը մեզ ալ կըպատահի, երբ առ Աստուած դիմելու, ղԱստուած փնտռելու, անոր միանալու յարգոր եւ խրատ լսենք, լոկ կըյուզուինք, ոմանք բարեմտութեամբ, ոմանք չարամտութեամբ, կամ բոլորովին անհոգ ու անտարբեր կըմնամք . ոչ կըհետեւինք եւ ոչ գտնելու կաշխա-

աինք, եւ կը մնանք անշահ եւ անպտուղ: Ափսո՛ս, ա՛յս է մեղքին բնութիւնը, այս է նրւթին յարելուն հետեանքը որ անընդունակ կըլլայ մարդ հոգեւոր կարօտութիւնն զգալու, զայն փնտռելու, Աստուծոյ կոչման ազդեցութիւնն զգալու, ձայնը լսելու եւ նորա այցելութիւնն ընդունելու: Սթափի՛նք, քրիստոնեայք, զմեզ այսքա՛ն սիրող Աստուծոյ սիրոյն՝ մենք ալ սիրով պատասխանենք. նա եկաւ սիրով զմեզ փնտռելու. ինչո՞ւ մենք ալ սիրով իրեն չը հետեւինք. մեր այս անհոգութիւնը յետոյ շատ սուղի կընստի մեզ:

Մոգերուն գալուստն ու նպատակը իմանալով Հերովդէս՝ կը յուզուի, եւ սաստիկ վրդոված շուտ մը Հրէից քահանայապետներն ու դպիրներ կանչեց ժողով գումարեց, եւ ո՞ գիտէ ի՛նչ յուզեալ սրտով եւ կերկրեալ ձայնով հարցուց. — «Քրիստոսը ու՞ր պիտի ծնի»: Անոնք պատասխանեցին. Հրէաստանի Բեթլեհէմ քաղաքին մէջ, ինչպէս որ մարգարէացած է Միքիա. — Դուն ալ, Ո՛վ Բեթլեհէմ, Յուդայի երկի՛ր, Յուդայի իշխաններուն մէջ պզտիկ մը չես. քեզմէ իշխան մը պիտի ելնէ ինձ, որ իմ Իսրայէլ ժողովուրդս հովուէ: — Հերովդէս ժողո լն արձակեց. եւ զաղտնի իր քով կանչելով Մոգերը՝ հարցուց եւ ստուգեց աստղին երեցած ժամանակը, իր խորամանկ յատակագիծը կազմեց իւր նենդժոտ մտացը մէջ. ապա Մոգերն արձակեց պատուիրելով որ երթան Բեթլեհէմ եւ երբ մանուկը գտնեն, իրեն ալ լուր տան, որ ինքն ալ երթայ երկրպագութիւն ընէ: Անօրէն խորհուրդը կեղծաւոր բարեպաշտութեան տակ կըծածկէ: Որչա՛փ թանձր է նախանձու կիրքէն պատճառած խաւարը — մտաց կուրութիւնը — որ ոչ Մոգերուն ներկայութիւնը, ոչ հրաշալի աստղին նկարագրութիւնը, եւ ոչ ալ Մարգարէին գուշակութիւնը ազդեցութիւն կընեն ցնորած Հերովդէսի մտաց վրայ, տեսնալու եւ ճանչնալու Աստուծոյ կարողութիւնը, կամքն ու գործակցութիւնը. եւ տակաւին կըյուսայ անմիտ փառասէրը՝ որ կրնայ դաւաճանութեամբ խափանել Աստուծոյ տնօրէնութիւնը: Մեզմէ ամեն մէկերնիս ալ, եթէ որ եւ է կիրքով վարակուած ենք, ճիշտ Հերովդէսին պէս կըմտածենք. հակառակ Աստուծոյ օրէնքին եւ նորա բարերար կամքին՝ մեր կամքն ու կիրքերը կըպաշտենք. քէն ռիս, վրէժինդրութիւն ընել կուղենք. մ՛ծութիւն, աստիճան, պատիւ, եւ ամեն պատշաճից օրէնք ոտնակոխ ընելով վայրագ

խոհուրդն իս կրկատարենք, եւ ամեն նենգուոր դաւածա-
նութիւններն աւարտելով կրկարժենք թէ յաղթանա-
կեցիք, եւ կրսեպենք թէ գոհ պիտի մնանք: Բայց
միշտ սխալած ենք. միշտ ճշմարիտ անարդողը ար-
համարհողը եւ անպտուղ տագնապողը կիրքով գոր-
ծողն է, շատ անգամ այլոց հասուցած լեատի ինքն
ալ կը լեատի չարաչար. վերջը կը հասկանայ սխալը. բայց
անօգուտ, եղած վեատն անդարմանելի է...: Զգուշա-
նանք, եղբա՛րք, կրից ծառայելէ:

Մոգերը Հնրովդէսէն բաժնուելով ճանբայ ինկան Բեթ-
լեհէմ գնալու. հալիւ Երուսաղեմէն դուրս ելած էին եւ
ահա նոյն աստղը տեսան որ իրենց առջեւէն կ'երթար:
Ո՛րչափ մեծ եղաւ ուրախութիւնն ին, եւ խնդացին որ իրենց
ծանօթ՝ բարեկամ առաջնորդը զիրենք թողած չէր, այլ
միջոց մը ծածկուած էր որ Մոգերուն միջոցաւ յայտնուի
Փրկչի ծնունդը, որպէս զի Հրեայք եւ նորա իշխաններն
արթննան իրենց թմրութենէն. լսեն Մեսիայի մասին եւ
հետաքրքրուին զայն փնտռելու եւ գտնելու. թէ եւ նոքա
անշարժ մնացին իրենց աշխարհասէր եւ փառամով թմրու-
թեան մէջ, բայց Մոգերը սրտովին կարօս՝ հետամուտ են
ժամ յառաջ գտնել իրենց ցանկալին, եւ կատարել իրենց
պարտականութիւնը. անոր համար ալ ահա երկնաւոր-առաջ-
նորդը կ'երեւի, ուղեցոյց կը լինի իրենց անկեղծ ու սուրբ
փափաքին հասցնելու, եւ գալով կը կենայ մանկան եղած
տեղին վրայ, որպէս թէ մատով ցոյց տալով մանկան տեղը:
Կրտսնէ՞ք, ժողովուրդ Աստուծոյ, որ սա անբան, անդ-
գայ աստղ մի չէ, իր շարժումը մեքենական չէ, սա գիտէ
ծածկուելու եւ յայտնուելու ատենը, գիտէ մանկան եղած
տեղը, եւ իբրեւ խոհուն էակ՝ կ'երթայ եւ հոն կը կանգնի,
անանկ որ Մոգերը անկասկած վստահութեամբ ներս կը
մտնեն, եւ արդարեւ հոն կը գտնան մանուկը, Հրէից նո-
րածին արքայն, եւ նորա ամենօրհնեալ մայրը սրբուհի
կոյս Մարիամը:

Զարմանալու արժանի բան մ'ալ հոս կայ, որ աստուա-
ծային ապրեցուցութիւն կրնանք համարիլ: Տեսէք, այս իմաս-
տութեամբ, իշխանութեամբ փառքով եւ մեծ հարստու-
թեամբ ճոխ մարդիկ այնքա՛ն հեռաւոր տեղերէ կը գտն
նորածին, բայց թագաւոր մանուկ մը ողջունելու, մանա-
ւանդ թէ մարմնացեալ Աստուծոյ երկրպագելու. քնապէս
կըլոսային գտնել հրաշալի փառաւոր պալատի, աննման

թանկագին, փափուկ ու փառաւոր զարդերու մէջ շքեղ հագուած սպասաւորներէ, իշխաններէ եւ նախարարներէ չրջապատած, արքայական գահու վերայ բազմած մանուկ. բայց ո՛չ, այս ամենուն հակառակ կը դռնեն. անշուք բնակարան, տկար, պարզ եւ անզարդ մանուկ, սղքատ մայր եւ զուրկ ամեն նիւթական փառքէ: Ասանկ դէպք մը եթէ մեզ պատահէր, կարծեմ ամենքնիս ալ տրտմութեամբ գայթակղած ետ պիտի դառնայինք: Սակայն այս ճշմարիտ իմաստուն մարդիկ չը գայթակղեցան, ամբարտաւան մտօք չարհամարհեցին, ինչպէս պիտի ընէին անմյոտ փառասէրները. այլ հնազանդելով երկնային ազդեցութեան՝ իրենց սէրն ու հաւատքը անվրդով պահեցին. եւ կատարեալ հաւատքով տեսան ու ճանչցան նորա մէջ անոր աստուածային ծագումը, մարմնացեալ Աստուածը, երկնքէն յայտնուած տիեզերաց թագաւորը: Յիսուս ինչպէս որ իւր խոնարհութեամբ սուրբեցուց թէ, — Մարգուն արժանիքը արտաքին նիւթական ճոխութիւնը, շքեղութիւնը, իշխանութիւնը եւ փառքը չէ, այլ ներքին հոգեւոր եւ բարոյական կատարելութիւններն են, որ արժանի կը ընեն զինքը արժանաւոր պատուոյ եւ ճշմարիտ փառաց —, նոյնպէս եւ Մոգերն իրենց գործով ապացուցին թէ — կը հասկանան այդ մեծ ճշմարտութիւնը, եւ առանց արտաքին վիճակին կարեւորութիւն տալու՝ կը ճանչնան մանկան անհամեմատ մեծութիւնն ու փառքը. — ուստի ամենայն ակնածութեամբ իրենց իշխանական ճակատը խոնարհեցնելով՝ երեսի վրայ ինկած իրենց խոնարհ երկրպագութիւնը մատուցին, եւ իրենց ճոխ գանձերը բանալով ընծանին նուիրեցին, ոսկի, կնդրուկ եւ զմուռս. ոչ թէ ամեն մէկը մէկ տեսակէն, այլ իւրաքանչիւրը երեք տեսակէն ալ ընծայեցին: Այս ընծաներուն տեսակին մէջ ալ խորհրդաւոր նշանակութիւն կայ: Ոսկին մատուցին իբրեւ հարկ՝ թագաւորի, որով յայտնեցին իրենց հպատակութիւնը. կնդրուկը, որ խունկ մի է եւ կը դրծածուի աստուածային պաշտամանց մէջ, նուիրեցին իբրեւ Աստուծոյ, որով խոստովանեցան զինքն Աստուած թագաւոր. զմուռսը նոյնպէս անուշահոտ խունկ մի է, համեմային եւ դառն, որ բայ ի կրօնից պաշտաման եւ օծութեան սուրբ իւղին մէջ գործածուելէ, յատկապէս մեռելներն օծելու իւղին բաղադրիչ նիւթն էր. ուստի զմուռսն ալ նուիրելով խոստովանեցան մեռելելու համար մարդա-

ցեալ — Աստուած — թագաւոր : Բայց թէ Մողերը իրենց այս ընծաները ա՛յս մտքով կամ նշանակութեամբ նուիրեցին , չենք գիտեր . սակայն այս ստոյգ է որ նոքա իրենց երկրպագութիւնն ու ընծաները մատուցին ոչ թէ լոկ մարդ թագաւորի , այլ Աստուածամարդ թագաւորի . քանզի անոնց իբրեւ առջնորդ նորանշան աստղը զրկող եւ անոր նշանակութիւնը յայտնող Աստուած՝ ծանուցած էր նոցա մանկան Աստուածութիւնը , եւ նոքա իբրեւ զԱստուած պաշտեցին ու մեծարեցին . ճանչցան իբրեւ երկնից դերագոյն առաքեալ , մարդկան Փրկիչ եւ տիեզերաց յաւիտենական թագաւոր , որուն չը հնազանդողը վերջապէս պիտի կորսուի :

Այս երջանիկ մարդիկը իրենց հաւատքին գործնական պտուղը նուիրելէ եւ պարտքերնին կատարելէ յետոյ , երկիւղած ուրախութեամբ եւ մխիթարութեամբ լեցուած էին , կրկարժէին որ Հերովդէս ալ նոյն զգացումը պիտի ունենայ , կ'ուզէին անոր քով գառնալ եւ տեղեկութիւն տալ , չէին գիտեր անոր նենգաւոր խորհուրդը . բայց տեսիլքի մէջ հրաման առնելով որ նորէն Հերովդէսին քով չը գառնան , ելան ուրիշ ճանապարհով իրենց հայրենիքը գացին :

Այս պատուական մարդիկը թէ եւ նիւթական ազնիւ ու ճոխ ընծաներ բերին , բայց անշուշտ սրտերնին ու բոլոր անձերնին ալ նուիրեցին եւ փոխարէն աննիւթ , հոգեւոր եւ անգին ընծաներ չնորհքներ ընդունեցին : — Առին հաւատք՝ առ ճշմարիտն Աստուած եւ առ նորա փրկարար տնօրէնութիւնն'րը , առին յոյս հոգեւոր փրկութեան եւ յաւիտենական կենաց . սէր առ Աստուած եւ առ նմանիս . ընդունեցին լոյս եւ իմաստութիւն զԱստուած ճանչնալով , սրբութիւն՝ կենաց նորոգութեամբ , եւ հոգեոյ խաղաղութիւն՝ Աստուծոյ հնազանդելով :

Երբ Մողերը գնացին՝ առանց Հերովդէսին հանդիպելու , սա շատ կատեցաւ , եւ որոշեց Բեթլեհէմի եւ անոր բոլոր տիքը գտնուող գիւղերու երկու տարեկանէն վար մանուկները կոտորել , որ Յիսուս անոնց մէջ մտնի . բայց Աստուած գիտէ իւր սիրելիները մահէն փրկելու հնարքը՝ երբ կամի : Ահա այն ատեն ծիրով հրեշտակը երեւցաւ Յովսէփին ու ըսաւ . — Ելի՛ր այդ մանուկը եւ անոր մայրը ա՛ռ փախի՛ր յեգիպոս . եւ հոն կեցի՛ր , մինչեւ որ ես քեզի ըսեմ . ինչու որ Հերովդէս կը փնտռէ այդ մանուկը՝ կորսնցնելու համար : — Յովսէփ արթնալով առաւ մա-

նուկն ու անոր մայրը, եւ փախաւ յեղիպտոս, եւ հոն մնաց մինչեւ Հերովդի մահը:

Մոգերը միսիթարուած ուրախութեամբ թող երթան իրենց հայրենի երկիրը տեսածնին քարոզելու եւ հռչակելու: Մանուկն Յիսուս, մայրը եւ Յովսէփ՝ Հերովդի կատաղութենէն փախստական հայրենի երկրէն՝ թող երթան պանդըխտիւ: Հերովդէս ալ տեսնելով որ Մոգերէն խաբուեցաւ, թող կատաղի, եւ իր գաղանային կրից զոհ տայ Բեթլեհէմի եւ անոր շրջակայ գիւղերուն անմեղ մանուկները, յափշտակելով իրենց որդեսէր մայրերու գորովալիբ գրկէն եւ խառնելով կաթն արեան հետ . . . : Ո՛հ անլու՛ր կատաղութիւն, քստմնելի՛ տեսարան. չեմ ուզեր այս նկարագիրն ընել որ ձեր սրտերն ալ չը մորմոքին:

Այս ամենը թող կատարուին իրենց կարգին. մինք փոքրինչ խորհրդածենք այս օրուայ խորհրդոյն վրայ, զոր բացատրեցի կարճառօտ, եւ մեր անկէ առնելիք դասը սովորինք:

Նախ խորհինք, ժողովուրդ Աստուծոյ, այս բոլոր եղած սքանչելի գործոց վերայ, անոնց մէջ տեսնանք ու ճանչնանք ամենակարող Աստուծոյ իմաստութիւնը, տնօրէնութիւնը եւ գործակցութիւնը: Հրեշտակաց աւետօքն ու փառաբանութեամբը հովիւք քաջալերուած, գիշերանց եկան, ողջունեցին այս մարգացեալ Աստուածորդին: Սիմէօն Մերունի եւ Աննա մարգարէուհի ճանչցան, օրհնեցին եւ հռչակեցին այս մանկան աստուածութիւնը: Մոգերը երկնաւոր աստղին առաջնորդութեամբ եկան շատ հեռաւոր երկրէ. մատուցին անոր խորհրդաւոր ընծաներ եւ երկըրպագին նմա իբրեւ մարգացեալ Աստուծոյ: Այս ամեն եղաւ՝ քանի որ դեռ մանուկ էր. ուրեմն կատարեալ հաւատքով ճանչնանք որ աշխարհի փրկիչ ըլլալու սահմանեալ այս մանուկը նա ինքն Բանն Աստուած է՝ որ սիրով մարմնացաւ մեր փրկութեան համար:

Երկրորդ, խորհենք. ո՛վ քրիստոնեայք, թէ մեր ճշմարիտ հաւատքն յայտնելու համար մեր բոլոր կենաց մէջ ի՞նչ մատուցինք, ի՞նչ նուիրեցինք անոր, որ ամեն բանի հետ իւր անձն ալ շնորհեց մեզ: Կատարեալ հաւատքին նշանն սէրը, սիրոյ պուղն է կեանքի նորոգութիւն, սրբութիւն, արգարութիւն եւ ճշմարիտ աստուածապաշտութիւն: Քննենք մինք զմեզ եւ տեսնենք թէ ունի՞նք հաւատք, ունի՞նք հաւատքին ազնիւ պտուղները:

Օ՛ն ուրեմն, քրիստոնեայք, մենք ալ մեր ամեն փափաք-

ները նուիրենք մեր սիրելի եւ բարերար Փրկչին . երկըրպագենք անոր հոգւով եւ ճշմարտութեամբ . ընծայենք նմա մեր միտքը , սիրտը եւ կամքը . հնազանդինք սիրով իւր կամաց , որ միշտ բարի է եւ կենսատու , մինչ մեր կամաց հնազանդելով՝ միշտ տեսած ենք չարիք ման եւ ապակահութիւն : Նորա կամքն ու օրէնքը թող լինի ուղղիչ մեր կամաց եւ յօժարութեանց , որ մեր բոլոր գործերը լինին պտղաբեր եւ արդիւնաւոր , որ մենք ալ արժանի լինինք Յիսուսի Փրկչին մերոյ կենսաբեր անօրէնութեանց ձրի շնորհին , յաւիտենական երջանիկ կենաց , ուր ազատ ամեն վիշտէ՝ փառաւորենք զինքը Հօր , եւ ամենասուրբ Հոգւոյն հետ , յաւիտեանս . Ամեն :

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

Արժ . Տէր Հայր ,

Սիրով եւ հաճութեամբ կարգամ Ձեր խմբագրութեամբ հրատարակուող Հայ - Եկեղեցի կրօնաթերթն : Կրօնական եւ եկեղեցական նիւթոց վերայ պարբերաբար հրատարակուած նամակներով քաջալերեալ՝ խորհեցայ թէ անհաճոյ լինելու չէ թերթիդ ընթերցողաց հետագայ կցկտուր տեղեկութիւնք ի մասին Շիրազայ հայ գաղթականութեան :

Եօթնեւտասներորդ դարու սկիզբներն Շիրազայ իշխան Ալլահ Վէրդի խանի խնդրանօք Մեծն Շահ Աբբաս 500 տուն հայազգի գաղթականներ յուղարկեց ի Շիրազ , որք քաղաքի այլ եւ այլ թաղերում եւ շրջակայքում հաստատուեցան եւ հետզհետէ իւրեանց բնաձիր ճարտարութեամբ եւ առեւտուրով զարգացան ու ճոխացան . եւ Շահ Աբբասի իմաստուն քաղաքագիտութեան շնորհիւ ամեն պաշտպանութիւն եւ հանդստութիւն վայելեցին : Որքան ժամանակ այդ մեծ թագաւորն կենդանի էր , իւրեանց համար եկեղեցիս եւ ճգնաւորական վանս շինեցին , եւ ամենայն ազատութեամբ իւրեանց քրիստոնէական կրօնը պաշտում էին : Բայց յետ այնորիկ այլ եւ այլ ժամանակներում անպիտան իշխանաց հարստահարութեանց եւ հալածանաց ենթարկուեցան , եւ

այլ եւս չկարողանալով համբերել՝ հեազհետէ հատուած առ հատուած թողին փախան Շիրազուց, իւրեանց տուն ու տեղ ու կալուած ի ձեռս Պարսից թողնելով, ինքեանք գաղթեցին Իբուշէն, Բաղդադ, եւ Հնդկաստանի քաղաքներու:

Այժմ մնան միայն 15 տնաչափ հայք, որք ոչ թէ յառաջին գաղթականութենէ մնացեալ բնիկ Շիրազեցիք են, այլ վերջերն Նոր Ջուղայէն եկած գաղթականք են: Սորա ունին մի փոքրիկ եկեղեցի եւ Սպահանայ գաւառակի Քեազազ գիւղից եկած մի քահանայ՝ Տէր Զաքարիա Մարտիրոսեան անուամբ, որն որ մերձ 12 տարի է այդ ժողովրդեան եւ եկեղեցւոյ հոգեւոր պաշտօնեայն է: Ամսական 6 թուման է ստանում ժողովրդից, որով հազիւ հազ կարողանում է իւր ամենահարկաւոր պէտքեր հոգալ: Թէպէտ Շիրազայ հայ բնակչաց նիւթական վիճակ այնքան նախանձելի չէ, բայց եւ այնպէս կարող էին իւրեանց քահանայն աւելի մխիթար ու հանգիստ պահել, եթէ երկպառակութիւն ու անհամաձայնութիւն այդ փոքրիկ գաղթականութեան ոյժերը չըլատէր:

Եկեղեցական շէնքն Շահ Աբբասի ժամանակի մնացածներէն է. սակայն երկրաշարժի պատճառաւ, որ գրեթէ ամեն տարի պատահի, մի քանի անգամ քանդուել եւ կրկին շինուել նորոգուել է: Վերջին նորոգութիւն 40 - 50 տարւով յառաջ տեղի ունեցաւ շնորհիւ մեր Բուշէնցի այն ժամանակի բաւրապաշտ եւ առատաձեռն հայրենակցաց:

Եկեղեցւոյ արտաքին մատակարարութիւնն գտնուում է Պարոն Յովհաննէս Մ. Տէր Սարգսեանցի եւ Պարոն Կարապետ Յ. Կարապետեանցի ձեռքն, որք 20 տարւոց ի վեր հոգաբարձութեան պաշտօնը վարում են:

Քրիտէք անշուշտ որ Շիրազում վախճանեցաւ մերազգի գրագէտ եւ անուանի բանաստեղծ Մեսրոպ Թաղիադեանց, եւ նորա գերեզման եւ շիրմն կայ մինչեւ ցայսօր Հայոց հանդատարանում՝ Բաբաքու կոչուած սարի փառակում: Բաբաքու սարն մի ուրիշ տեսակէտով եւս համբաւաւոր է հայադրեաց համար: Այդ լեռան վերայ կըզանուի մի փոքրիկ շէնք ուր Հայոց անդրանիկ լրագրի՝ Ազգարարի խմբագիր եւ հիմնադիր՝ Տէր Յարութիւն Շմաւոնեան բաւական ժամանակ (չգիտեմ թէ իւր կենաց վերջին տարիներում թէ յառաջագոյն) ճգնութեամբ անցուցած է:

Քաղաքիս Բիթլիոսիքերուն կոչուած պարսից գերեզմանատուն, որպէս պարսկական անունն եւս յայտ առնէ,

առաջին (Շահ Արբասի) գաղթականութեան ժամանակ շինուած վանքերից մին էր, մասնաւորապէս իրրեւ կուսաստան կամ կուսանաց անապատ կոչուէր, նման մեր Զուղասու կուսանաց վանքին, յորում սարկաւազուհիք կրճգնէին եւ բարեպաշտակուն ու կրթական գործերով պարապէին: Երեւի երբ յընթացս ժամանակի Շիրազայ հայ բնակիչք սպառեցան, նման միւս եկեղեցեաց եւ աղային հաստատութեանց՝ սոյն կուսաստանն եւս անախրութեան մասնուելով՝ վերջն Պարսից գերեզմանատուն դարձաւ, եւ իրրեւ յիշատակ՝ Բիքիոյիսրերուն անունը, որ մեր կր սուսան բառին համապատասխանէ, եւ եկեղեցւոյ զմրէթի եւ կուսանաց խուցերի աւերակնել՝ մնացած են մինչեւ յայսօր:

Շիրազայ հայազգի փոքրիկ գաղթականութեան մէջ վաճառականութեամբ են պարապում Պարոն Աէթ Կ. Արզարեան ընկերք, Յարութիւն Մէլքումեան եւ որդիք, Յովհաննէս Ս. Տէր Սարգսեանց եւ եղբայր: Պարոնայք Մարգար Յ. Ամիրխանեան եւ Կարապետ Յ. Կարապետեան յառաջ հեռագրիչներ էին անգլիական ընկերութեան մէջ, բայց այժմ գործէ քաշուած լինելով՝ հանգստեան թոշակ են ստանում: Իսկ իւրեանց փոխարէն՝ նոցա երկու որդիք հայրենի արհեստով զբաղին: Կան նաեւ մի քանի հայ երիտասարդներ որ գրամատան մէջ եւ այլ եւ այլ եւ բուպայի վաճառականաց մօտ գրագրութեան պաշտօն են կատարում: Իսկ մնացեալ մի քանի տուն հայերն ըստ մեծի մասին գինեգործութեամբ եւ գինեկաճառութեամբ ապրին:

Այսքան փոքրիկ եւ համեմատաբար չնչին ու աղքատ գաղթականութեան մէջ բնական է որ ուսումնական հաստատութեանց վերայ շատ ուշադրութիւն դարձնել կարելի չէ: Մի քանի տարւով յառաջ փորձեցինք մի գրական ընկերութիւն հաստատել, որոյ գլխաւոր նպատակն էր մի ընթերցատուն եւ գրադարան ունենալ: Տեւողական չլինելու եւ անյաջողութեան պատճառներ բնականաբար յայտնի էին մի այսպիսի փոքրիկ գաղթականութեան մէջ: Բայց Տէր Զաքարիա ընթերցատէր ոմն է եւ շատ ուրախ պիտի լինի եթէ Հայ-Եկեղեցին առաքէք նմա. միեւոյն ժամանակ նորա նիւթական անմխիթար վիճակ աչքի առաջ պահելու է ի մասին բաժանորդագնոյն:

Յաւել քան զայս ամհնայն՝ ընդունեցէք նուաստիս յարգանաց եւ սիրոյ ողջոյն,

Որով մնա՛մ, Խ. Ծ.

Շիրազ 26 Փետրուար 1901

ՄԿՐՏԻՁ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՆԱՄԱԿ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԷՆ

Արժ. Եղբայր Ի Գրիստոս ,

Այսօր ստացանք թերթերը , կըյուսամ թէ գուք ալ ստացած էք մեր նամակները :

Ձեր յօդուածը — Քահանայի պարտք եւ իրաւունք — հաճութեամբ կարդացուեցաւ : Երկու գիտողութիւն ունիմ . նախ՝ քահանայական աստիճանի անջնջելիութեան մասին ըսածդ պիտի ըմբոստացնէ անարժան եւ զեղծ վարք ունեցող քահանայներն եպիսկոպոսաց զէմ , երբ նոքա ստիպուին ի պահանջել հարկին կարգալոյծ անել , կամ իսպառ գազրեցնել պաշտօնավարութենէ , որ զժբաղքաբար յաճախ պատահական է մեր մէջ , երբ քահանայի մը վարքը իւր կարգին եւ աստիճանին անվայել է , երբ չարիք ու մեղք հրապարակաւ խայտառակուած՝ ժողովրդեան դայթակղութիւն է . մի՞թէ նորա շնորհն ու աստիճանն ինքնին ջընջուած չէ . մի՞թէ նա իւր պարտքը չը գործադրելով իրաւունքէն զրկուած չէ : Գիտեմ որ Աստուծոյ շնորհն անզեղջ է . բայց շնորհն իւր նշաններն ունի :

Երկրորդ . 49 երես չորրորդ տողին մէջ պակաս կայ . «ապափինեալ ընդ նւիսն» էն վերջը պիտի ըսուի — «զիսաւար մեղաց . ամբառնալ ուշիւ իմաստիցս՝ ի կենցաղոյս երկրէ ի բարձունս» : (Նաբէկ ԼԳ. 2 :))

Նիւթերդ շատցան , տարիդ վերջացաւ . կըյուսանք , ինչպէս ես նոյն եւ բոլոր բաժանորդներդ , եւ կըցանկանք որ ընդարձակես , ծաւալն ընդարձակելով եւ նիւթն բազմակողմանի ընելով :

Գիտնալով որ շատ պաշար ունիս՝ ես անհոգութիւն կընեմ , բայց զբաղում ալ շատ ունիմ . քարոզի պատրաստութիւն ալ ունիմ . տեսնենք երբ գործի կըսկսիմ :

Սիրելիս , ես չըսի թէ ասանկ թերթ մը անկարելոր կը սեպեն բաժանորդք , այլ ընդհակառակն՝ կարելորութիւնը ճանչնալով կըթախանձեն որ աւելի ընդարձակ ծաւալ ունենայ եւ բազմակողմանի նիւթեր պարունակէ : Այս պահանջ կըյայտնէ կարօտութեան մեծութիւնը . թերթն ամսական է , բայց շարաթականի պարունակութիւն ալ չունի . երկա՛ր ամիս մը սպասելով մէկ ժամէն կըկարդանք գրեթէ միեւնոյն նիւթի վրայ գրուած մի քանի յօդուածներ , եւ անյարակնկալութեամբ կըսպասենք միւս ամսուն : Այս պատճառաւ ոչ թէ թերթին մեռնելը , այլ աւելի պարզանալն ու

բարգաւաճեւը կ'ուզուի . ուստի կըյուսացուի որ յառաջիկայ տարեշրջանին աւելի զարգուն եւ բեղուն կը տեսնուի , որոյ համար ցանկացող , աշխատող եւ աղօթող եմք ու կրմնամօք ողջունիւ եւ օրհնութեամբ բարեացակամ ,
 ԵՆՈՒՍԱՊԷՆ 5 Մարտ 1901

ՄԱՄԲԻԷ ԵՄ . ՄԱՐԿՈՍԵԱՆ

ՆԱՄԱԿ ԹՕԳԱԹԻՆ

Տէր Հայր ,


Կըփափաքէի ունենալ «Հայ. Եկեղեցին» եւ միջոցին վրայ կըխորհէի , երբ յանկարծ Ձ պրակը նամակով մը կստանամ : Քա՛նի ուրախ կըլինի մարդ երբ սաստիկ բաղձացածին կըհասնի : Ի՛նչ խորհրդաւոր գտայ թերթին առաջին երեսին , լեհօրէն կանգուն գոթական տաճար մը , եւ որուն մէջ ճարտարապետներ , որք յուշիկ յուշիկ սուր ուփայլուն գործիներով կըգրուակեն , կընկարեն . կըզատուկերացնեն վերեւ թղթին , ահաւոր շէնքին ճարտարարուեստ շինուածքը որուն կատարելութիւնը մարդուս հիացումը կըգրաւէ . ու գրաւած է : Այդ շէնքին մէջ կայ արդեօ՞ք մի յօրինուածք որ կարգի ու սարքի օրէնքէն գուրս լինի . ո՛չ : Չայնս ծանուցանել ամենուն եւ դեռ անգիտակների ալ ամբողջովին պարզել՝ մի նուիրական , ըսեմ սրբազան պարտաւորութիւն է . եւ այդ ալ կըկատարեն միայն անոնք , որք վեհ պաշտօնին գիտակ եւ նուիրուած անձնաւորութիւններ են : Գու՛ք եւս այն կարգէն էք ո՛ հոգեխօսիկ Հայր . դու՛ք բացարձակ պակաս մը լիովին եւ անձնուիրաբար կ'ամբողջացնէք : Ձեր ըն՛ծացք ընդդէմ է այն եկեղեցականաց՝ որոց չէ փոյթ վասն ոչխարաց : Մանաւանդ ներքին գաւառներու խորերը թշուառ ժողովուրդը գրեթէ ընդհանրապէս , տակաւ տակաւ կ'ուծանայ Հայ. Եկեղեցւոյ փարսխէն , եւ կըմնայ անմասօթ Ս. Եկեղեցւոյ ուղղափառ դաւանութեան , եւ Ս. Աւետարանի ճշմարտութեան , չարժուն եղէգի պէս ամէն հովերէ կ'երերկտայ , եւ ահա Ձեր թերթ իւր հոգեշունչ գրուածներով թո՛ղ ծառայէ անոնց բացարձակ պէտքերին : Խօսեցէք յատենի եւ՛ի թղթի , ի վեր հանելով թէ Հայ. Եկեղեցին մի անթարչամ ու անթառամ ծաղկանոց է . որուն մէջ գունապեղ ու զարմանազան ծաղկունք չատ են . որին բոյրը , որին թոյրը .

հոտոտողին ու դիտողին կըզարմացնէ . միտոյն ճիւնտիայլ պահուածը , միւսին բոտորակել շուք ու կրանդ , կըհմալին կըթովին ման եկողն . հասկա որչա՛փ անոր , որ բուսաբանօրէն հմտութիւն ունի այդ ծաղկանց կազմութեան վրայ : Ուրեմն քաղեցէք անմահական Շարակնոցէն , Մաշտոցէն , Ճառնատիրներէն ու աւելի Սրբազան Մասեհնէն , հինէն ու նորէն . եւ փունջ փունջ կապելով նուիրեցէք Հայ Եկեղեցւոյ հարազատ զաւկներին : Թո՛ղ պասքեալներ ու քաղցածներ զիմն , զի յայդմ պիտի կրնան գանել համագամ խորտիկներ եւ ջրերս զուլալ ու սառնորակ քաղցը ու պատուքը անցնող , թո՛ղ բանաւոր հօան մոլորողներ գառնան ի փարախ սշապալար , իրենց նիւար ու վախ հոգիքն պարարտացնելու . թո՛ղ կորսուածներ փութան առնելու ճշմարիտ ուղեցոյցն ուղիղ քայլելու ու չրխոտողելու . թո՛ղ վերաւորներ եւ հիւանդներ փնտռեն ճարտար բժշկապետն , որ հաաւնաիր թանկ դեղերով լեցուցած է իւր դեղարանը . ամենը կրնան անոր զիմել ու բուժել : Այո՛ , Ձեր զրչով առաջնորդեցէք դէպի հո՛ն գրքերուն Գրքին :

Ինչք քաջալերութեան արժանի էք Տէր Հայր ու նաև անկեղծ եւ խորին շնորհակալութեան . եւ ես տրուպ պաշտօնեայ մը Հայ Եկեղեցւոյ , իմովսանն ջանադիր պիտի լինիմ ծառայութիւն մը ընել թէպէտ չնչին , շատերին բաժանորդագրել տալով պատուական թերթիդ :

Սիրով ողջունելով զՁեզ
Թօղաթ 13 Մարտ 1901

Մնամ Ձեզ աղօթակից
ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՍԼԱՆԵԱՆ



ԱՆՁՆՁԵԼԻՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ

Ընթերցողաց ուշադրութիւնը կը հրաւիրենք Գեր . Տէր Մամբրէ Եպիսկոպոսի մէկ կարեւոր նամակի վերայ , զոր պիտի գտնեն ներկայ թուոյս մէջ ի շարս Թղթակցութեանց : Մեր Արքազան Թղթակցի ղիտողութիւն ի մասին անջնջելիութեան քահանայական աստիճանի կրնայ գործնական տեսակէտով իրաւացի լինել , երբ փոքրագոյն չարեօք մեծագոյն չարեաց առաջն առնելու հարկ տեսնուի : Բայց յիշեալ յօդուածի մէջ մեք չփորձեցինք ներկայ սովորութեան ուղիղ կամ սխալ լինելն հուշակել . ոչ եւս խորհեցանք թէ «պիտի ըմբոստացնէ անարժան եւ զեղծ վարք ունեցող քահանայներն եպիսկոպոսաց դէմ» , կամ հակառակն : Նոյնպէս մեր սահմանէն դուրս համարեցինք քննադատել ոմանց եպիսկոպոսաց սովորութիւն , որով զքահանայս «կարգաւորյժ» կ'առնեն կամ իսպառ կը դադարեցնեն ի պաշտօնավարութիւնէ : Այլ մեր ձեռնարկեալ առարկային սահմանի ներքոյ գտանք՝ Ս. Գրոց վկայութեամբ եւ Ձեռնարկութեան Մաշտոցի բանիւք հաստատել թէ քահանայութիւնն ըստ ինքեան անջնցն ի է : Կարծեմ մեր Արքազան Թղթակիցն եւս պիտի ընդունի այս պարզ աստուածաբանական եղբակացութիւնն , առանց ի նկատի ունենալու թէ ի՛նչ չար կամ բարի հետեւանք կարէ ունենալ այդ եղբակացութիւն :

Յիշեալ յօդուածի չորրորդ թուոյն մէջ (էջ 35) ասած էինք . «Հարկաւ մեր խօսքն այստեղ առ ժամանակեայ պատժոց վերայ չէ , որ սակայն կարէ միայն առժամանակեայ եւ մինչեւ իսկ երկարամեայ արգելքի կերպարանք ունենալ» : Ս. Գիրք եւ մեր Մաշտոց որպէս եւ նախկին Եկեղեցւոյ սահմանադրութիւն միայն այսքան պատիժ գիտեն եւ կընշանակեն յանցաւոր քահանայից համար : Մենք ուզեցինք ցոյց տալ թէ քահանայութիւնը շատ աւելի բարձր է քան թէ մեր ժողովրդի կարծածն , եւ Հայ Եկեղեցւոյ շահը կը պահանջէ որ իրապէս եւ գործնապէս այդ սուրբ աստիճան արժանապէս բարձրացնենք , այսինքն , մեր Մաշտոցի նկատեալ բարձրութեան հասցնենք : Սորա միակ միջոցն է կրթութիւնն . այսինքն հայ քահանային տալու է մի այնպիսի կրթութիւն որ համաձայն լինի մեր Մաշտոցի պահանջեալ զիտութեանց եւ յատկութեանց : Մեր ե-

կեղեցւոյ պետերն եւ մեր ժողովրդեան մեծերն լաւ հասկանալու են որ կանամբացի քսնանայ՝ ց եւ. ամուրի կղերի կրթութեան միջեւ տարբերութիւն գնել՝ բացարձակ անիրաւութիւն է եւ հիմնովին հակառակ է մեր Մաշտոցի ոգւոյն: Եթէ մի տարբերութիւն երեւակայել կարելի է՝ այդ այն է որ քահանայն դեռ շատ աւելի կրթութեան պէտք ունի քան թէ վեղարաւորն: Ամբողջ հովուական արտուածարանութիւն քահանայի առօրեայ պաշտօնավարութեան միջոցին, խոստովանութեան միջոցին, հովուական այցելութեանց միջոցին եւ հաշարու մէկ ուրիշ դէպքերու մէջ ի հանդէս կը դայ, որ դուն ուրեք եւ միայն բացառաբար կը լիճակուի ամուրի կղերին: Ո՞վ կրնայ ուրանալ որ այս քան տխարահային փորձառութեամբ հարստացեալ, իւր ժողովրդեան բոլոր պարագայներ մտերմաբար եւ մանրամասնօրէն գիտցող եւ ուսումնասիրող քահանայն ամենէն լաւ քարոզիչն կրնայ լինել որպէս առանձին՝ առանին նոյնպէս եւ հրապարակաւ՝ յեկեղեցւոյ եւ այլ ուր, եթէ միայն հարկ եղած մտային եւ հոգեւոր նախապաճառատական կրթութիւնն ստացած լինի իւր ձեռնադրութենէն յառաջ: Ամուրի կղերն իւր տեղն ունի որպէս եւ կանամբացի քահանայն, երկոքին զասակարգութիւնք պէտք է զգան որ ամենքն եւս մէկ մեծ եւ սրբազան. նպատակի կը ծառայեն, ամենքն հաւասարապէս աշխատելու են երկնից արքայութեան տարածման եւ հաստատման համար, եւ վեղարաւոր զասակարգը պէտք է իւր մտքէն փարստէ այն կարծիք թէ վարդապետացուն վեցամեայ կըրթութեան պէտք ունի, իսկ քահանայացուն՝ առ առաւելն միայն վեցաւեցայ, կամ ինչպէս անցեալները նորոքնայ սքեղայ ոմն Աւէջմիածնէն պա գամ կ'որոտար, թէ վարդապետն «ձեմարանաւարտ» լինելու է, եւ քահանայն՝ «միջնակարգ դպրոցաւարտ»:

Հայ. Եկեղեցին օր ըստ օրէ պիտի իւր ազդեցութիւնը կորսնցնէ, իւր զաւակները պիտի օտարանան եւ հաւատքնին փոխեն, որ քան ժամանակ մեր բարձրագոյն կղերն որպէս եւ գրեթէ մեր ընդհանուր ազգն քահանայից կրթութեան համար այս քան քիչ համարում ունի: Երբ քահանայն պէտք եղած կրթութիւնն ունենայ եւ լաւ ըմբռնէ իւր կոչման վսեմութիւնն ու նշանակութիւնն, ինչպէս աշխատեցանք ցոյց տալ յիշեալ յօդուածով, յայնժամ մեր Սրբազան թղթակցէն յիշեալ՝ քահանայից ըմբոստ անարժան եւ զեղծ վարքն ըստ ինքեան կ'անհետանայ, եւ պէտք չի մնար այլ եւս քրիստոնէական կրօնի մի հիմնական օրէնքն անտես առնել՝ անջնջելի քահանայութիւնը հասարակ աշխարհային պաշտօնի պէս առնել եւ տալ, կարգել ու փոխել:

ԵՐԿՈՒ ՈՍՈՒՆԵՐ

Մ Ա Ր Մ Ի Ն ՈՒ Հ Ո Գ Ի Ն Ի Ր Ա Ր ՈՒ Դ Է Մ .

ԳՐԵՑ ԱՐԺ . ՏԵՐ ԱՌԵՏԻՍ Վ.ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ .

Կ Ա Ն Խ Ա Բ Ա Ն .

Հոգին ու մարմին երկու ընտանիքներ են իրարու , եւ միանգամայն թշնամի եւ հակառակ . որովք մի անձ կը կազմուի , այսինքն՝ մա՛րդս : Հոգին որ Աստուծոյ շունչն է , միշտ բարի եւ առաքինի ձգտումներ կ'երեւցնէ իւր բաղձանքներուն մէջ (Թէպէտ երբեմն յաղթահարուելով մարմնոյ կիրքէն՝ յոռի երեւոյթներու ալ կըզիջանի յակամայից . բայց զըջալով յետ կըգառնայ դէպի իւր բնական բարին) : Իսկ մարմին՝ որ յոռի եւ ապականացու նիւթէ յառաջ եկած է , իւր բաղձանքն ու ձգտումներն յաճախ դէպի յոռի եւ անարգ կիրքերը կըշեղէ , եւ ասկէց է , որ անձնիշխան կամքն ալ իր կողմը կուներնայ :

Եւ որպէս զի բարեմիտ ընթերցող ուշադրութեամբ հանցիք ընծայէ , թէ ի՛նչ է մարդս , եւ կամ թէ ի՛նչ միջոցաւ պիտի կարողանայ մարմնոյ կրից հետ մրցիլ ու յաղթել անոնց , հոգին ու մարմին իրարու դէմ դատախազ կ'ենանենք . այս դիտմամբ փոքրիկ զրութիւնս՝ կ'անուանենք Երկու Ոսոխներ :

Եւ որովհետեւ ապստամբ մարմնոյ կողմը միշտ կերեւի անիրաճ արտուունջն ու անտեղի պահանջներ , անկէ՛ նախ վէճը կըսկսի . որոյ շարունակութիւնը մինչեւ հոն կը հասնի , ուրկէ մարմին իւր վերջին հրաժարականը կ'իւծայ հոգեոյն : Իսկ հոգին իւր յոյսը բոլովին Քրիստոսի վրայ դնելով անոր կը դիմէ աղերսանքով , եւ ամէկ՛ քաջալերական յոյս , օգնութիւն ու յաղթութիւն կ'առնու : Սոյն փոքրիկ երկասիրութեանս իբրեւ վկայ եւ աղբիւր՝ Պողոս առաքեալի պատգամներէն քանի խօսքերը հոս կըգնենք :

Առաքելական Պատգամք .

Մարմին ցանկայ հակառակ հոգւոյ եւ հոգի հակառակ մարմնոյ . եւ զի սոքա միմեանց հակառակք են , մի՛ զոր կամիցիքն՝ զայն անիցէք Ձի յայտնի են գործք մարմնոյ , այսինքն են , շնութիւն , պոռնկութիւն , պղծութիւն , գիջութիւն : Կռապաշտութիւն , կախարդութիւն , թշնամութիւն , հեռ , նախանձ , բարկութիւն , հակառակութիւնք , երկպառակութիւնք , հերձուածք : Չարակնութիւնք , սպանութիւնք , արբեցութիւնք , անառակութիւնք , եւ որ ինչ սոցին նմանք են որք զայսպիսիս ինչ գործեն , զարքայութիւնն Աստուծոյ ո՛չ ժառանգեն :

Իսկ պտուղ հոգւոյն ա՛յս է , սէր , խնդութիւն , խաղաղութիւն , երկայնամտութիւն , քաղցրութիւն , բարութիւն , հաւատ . հանդարտութիւն , հեզութիւն , ժուժկալութիւն , ճնշումն , այսպիսեաց աստի օրէնքն չեն հակառակ : Քաղատ . Ե . 17 . 19 . 20 . 21 . 22 . 23 :

Ձի որք ըստ մարմնոյն են . զմարմնոյն խորհին , եւ որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն : Ձի խորհուրդ մարմնոյ մահ է . եւ խորհուրդ հոգւոյն՝ կեանք եւ խաղաղութիւն :

Քանզի խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յԱստուած . թէ օրինացն Աստուծոյ ո՛չ հնազանդի . նաեւ կարէ իսկ ո՛չ : Ձի որք մարմնովն են , Աստուծոյ հաճոյ լինել ո՛չ կարեն : Հոովմ . Ը . 5 . 6 . 7 . 8 :

Հաճեալ եմ ընդ օրէնսն Աստուծոյ ըստ ներքին մարդոյն : Բայց տեսանեմ այլ օրէնս յանդամս իմ զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց , եւ գերեալ զիս օրինօքն մեղաց , որք են յանդամս իմ : Այր մի տառապեալ եմ ես , ո՞վ ապրեցուցէ զիս ի մարմնոյ աստի մահու : Այլ շնորհքն Աստուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ : Հոովմ . Է . 22 . 25 :



ԵՐԿՈՒ ՈՍՈՒՆԵՐ

ՄԱՐՄԻՆ ՈՒ ՀՈԳԻՆ ԻՐԱՐՈՒ ԴԷՍ

Մարմին Տրեմչող

Ընկե՛ր . ինձի՛ չես համակամ .
 Ձիս կը զըրկես՝ ամեն անգամ .
 Գեղ եղած եմ՝ խոտեալ անդամ .
 Իբրեւ գերի՛ միշտ ժուռ կուզամ :

Ընկե՛ր . ինձի՛ չես զիջանիր .
 Բընաւ վըրաս՝ հող չես տանիր .
 Կամքով կամքիս՝ չես նըմանիր ,
 Ծառայութեանս ալ չես հաւնիր :

Ձո՛վ ունենամ՝ ինձ գրթացող .
 Կամ ցաւակից՝ ու հոգացող .
 Ո՛վ կայ ինձի՛ վըրայ լացող .
 Կամ ինձի հետ՝ ճանրայ գացող :

Հոգին Կարեկից

Ը՛նկեր . ի՞նչու՛ ես յուսահատ .
 Կուլաս կողբաս՝ իբրեւ վըհատ .
 Խօսէ՛ ուզիղ՝ քուկին գանգատ .
 Որ ես տեսնեմ՝ ճըշմարիտ դատ :

Ուտել խըմելդ՝ միշտ անպակաս .
 Քուռն ու հանգիստ՝ միշտ կուսնեսաս .
 Ինձ ծառայելդ՝ քեզ ի՞նչ վընաս
 Կուտայ . որ դէմս՝ կը տըրտընջաս :

Թէ՛ որ դուն ինձ՝ լըսող ըլլաս .
 Ես կը խօսիմ՝ օգտակար դաս .
 Թէ՛ որ դուն ինձ՝ հետ միանաս .
 Հետս Աստուծով՝ կ'երջանկանաս :

Մարմին Անհաւաս

Ո՞վ է այն տէր՝ քուկին ըսած .
 Զորն որ բընաւ՝ ես չեմ աեսած .
 Բաղդն է ահա՛ իմին Աստուած .
 Զիս միշտ անոր՝ եմ նուիրած :

Բաղդին տալիքն՝ ինձ հեշտալի .
 Զգայարանքիս՝ խիստ հաճելի .
 Թէպէտ քեզի՛ զառն ու լեզի .
 Բայց ինձ նըման՝ կարող եղի :

Բաղդէն կուզեմ՝ իմին պետքերս .
 Նա կուտայ իմ՝ ուզած գոյքերս .
 Որո՛վք կընեմ՝ գո՛ր իմ կիրքերս .
 Ահա՛ իմին՝ սիրած ձիրքերս :

Հոգի Աննդիմանող

Դուն յիմարի՛ տեղն ես անցնծ .
 Բողոքովին՝ ապուշ՝ գարձնծ ք .
 Որ արարիչ՝ տէրդ ես թողնծ .
 Եւ կոյր բաղդին՝ գերի եղած :

Թէ անասուն՝ թէ բանական .
 Ստեղծող տէր միշտ՝ կը ճանչընան .
 Երախտադէտ՝ ու փառաբան .
 Իրենց տիրոջն՝ են անխափան :

Երախտամո՛ռ՝ անրդգայուն .
 Անբաններէն՝ վատ եւ նրկուն .
 Բաղդին գերի՛ մի՛ լինիր դուն .
 Պաշտէ զԱստուած՝ տէրն ամէնուն :

Մարմին Ապասամբ

Բաղդ շատերուն՝ շատ հաղուագիծտ .
 Պասմուակնն է՝ եւ ոսկի զուտ .
 Երբ՝ Վրսես բաղդն՝ է անօգուտ .
 Զայրոյթն ու ցաւ՝ կուտեն զիս շուտ :

Քու խըրատներդ՝ ինձի համար .
 Սուր խոցուիչ՝ վընասարար .
 Զիս կը խոցին՝ անգրթարար .
 Եւ կը թողուն՝ մըշտաչարչար :

Ես ի՞նչ սքրտով՝ յօժարանամ .
 Մտառիկ քեզ՝ ու քաջանամ .
 Ի՞նչ բանին որ՝ ես ցանկանամ .
 Զայն ինձ չես տար՝ որ գո՛ր Վինամ :

Հոգիւն Երուսաղատ

Իրաւունքով՝ եմ քեզ իշխող .
 Առատ ձիրքեր՝ քեզի բաշխող .
 Անձնիշխան կամք՝ եմ ունեցող .
 Դու առանձ ինձ՝ հող ես դարձող :

Գործիք ես դու՝ ինձի համար .
 Մառայելու՝ ես ինձ յարմար .
 Մառայութիւնդ՝ մի՛ զըլանար .
 Խօսքըս լըսէ՛՛ մի՛ խըլանար :

Իմին խօսքեր՝ խըրտտ են քեզ .
 Թէ որ լինիս՝ խոնարհ եւ հեզ .
 Գու վերքերուդ՝ բըժիշկն եմ ես .
 Թէ որ դեղիս՝ յարգը գիտես :

Մարմին Տրակչող

Անգութ տիրոջ՝ եմ մատնուած .
 Բռնութեան տակ՝ եմ ձընչուած .
 Գերիի պէս՝ եմ կաշկանդուած .
 Ազատութիւնս՝ ինձ չէ տըրուած :

Ձեռք ոտք ունիմ , այլ կապի տակ .
 Բանտարկուած եմ՝ կամքիս ներհակ .
 Դընալ գործիլ՝ չեմ յաջողակ .
 Կը տառապիմ՝ արգելափակ :


Տեսնող աչքերս՝ են մըթընցած .
 Ողբ ու լացէն՝ խիտտ չըլացած .
 Իերնիս չըրթունքն՝ արդէն փակուած .
 Լըռութեան են՝ դատապարտուած :

Հոգիւն Խրատիչ

Այս կեանքիս մէջ՝ ազատութիւն .
 Ըստուգապէս՝ ա՛յն է մարդուն .
 Մեղքէ փախչիլ՝ մըտնալ իւր տուն .
 Եւ պարապիլ՝ իւր գործերուն :

Դուն ալ կամքիս՝ լի՛ր ենթակայ .
 Եւ Աստուծոյ՝ խոնարհ ծառայ .
 Մեղ երջանիկ՝ մի ապագայ
 Կեանք կը տըրուի՛ եւ վերջ չըկայ :

Ձեռք տուր ինձի՛՝ գործերնք բարի .
 Որ Աստուծոյ՝ կամք կատարի .
 Թէ որ մընանք՝ քաջ եւ արի .
 Դիւրաւ կըրնանք՝ յաղթել չարի :



1874

